զբարեկարգութինս մերայնոցն տեղւոյն, և թէ հնար ինչ իցէ մնալ անդ՝ մինչև ի մահ. բայց ոչ դադարեալ դարձայ ի վիեննայ. և հաստատեալ աստ՝ ըստ առաջին կացութեան ապրիմ դժուարութեամբ ծերութեան և աղքատութեան իմոյ ըստ ամենախնամ հաճոյից բարերար կամացն աստուծոյ: Եւ որովհետև ի գալն իմ աստ՝ գտի զՊարոն Յօհաննէսն մոնհայիմեան քուրիերն կայսերական կենդանի, որ ցանկայր ունել զպատմութիւն երանելի տէր Կոմիտասին վասն ցուցանելոյ արքունւոյն զազնութիւն ազգին միոյ թոռան նորա և քեռորդւոյն Պարոն Յօհաննէսին մոնհայիմեան (որ որբացեալ ի հօրէ և ի մօրէ գտանի աստ՝) և հոգալոյ նորա հաց յարքունուստ, պարտաւորեցայ գրել և թախանձանօք մեծաւ հայցել ի Գ. Հ. զի յանձն առեալ զաշխատանս վասն գթութեան և ողորմութեան հաճեսցի յղել օրինակ մի կամ հայերէն կամ իտալերէն վերոյասացեալ պատմութեան ընդ ումեք, որ գայցէ աստ. և զծախս, զոր ունիցի՝ ի յառնուլ և յղել զայն՝ հաճեսցի գրել. զի մեծաւ շնորհակալութեամբ վճարեալ լիցի ում և կամեսցի Գ. Հ. եթէ ընդունելի լիցին խնդրուածքն իմ, որ պարտաւորեալ նուիրեմ զանձն ծառայութեան Գ. Հ. զոր ինչ հաճեսցի հրամայել ինձ:

Եւ յանձն ապարեալ զիս հաճոյական աղօթից Գ. Հ. զսուրբ աջն համբուրեմ. և Գ. Հ.

Խոնարհ

Նուաստ ծառայ

Յամի տեառն 1766 *դեկտ.ի* 13 *Յովհաննէս Արիմանեան*

ի Վիեննայ *քահանայ անարժան*

ՄԿՋ.

Հրդեհի մը ծնունդն ու տխուր հետևանքները:

Գերամեծար գերյարգելի Սրբոյ հօր միրոյ և բարեշնորհապետի
տեառն տեառն Ստեփաննոս վարդապետի, ողջոյն

Թղթ. ԴՂ.

... ի նոյեմբ. 19 *ի շաբաթ գիշերին, որում լուսանայր յիսնակաց բարեկենդանն, և եղև հրկէզ արտաքոյ դրան ղումղափուին: Եւ հուրն ի տանէն, որ էր առաջի աղբերն. և աղբիւրն էր մերձ դրան պարսպին ղումղափուին, ուստի եղեն մեծամեծ աղէտք. քանզի ոչ արքունի զիջուցանօղքն կարէին ելանել արտաքս, և ոչ արտաքոյ եղեալքն կարէին մտանել ի ներքս և փախչել ի կրակէն: Եւ յայնմ մեծի դաշտավայրի՝ ոչ մնաց տեղի ապաստանի, զի ի չնչելոյ ուժգին և սաստիկ բօրեազին, մնացին Բ կամ Գ տունք. և այլն ամենայն այրեցան: Ուստի փախչէին դէպի ծովն. և ոչ ևս անտի կարէին փախչել, քանզի և ղայեխանախքն և նաւակքն այրեցան. և բազում նաւակաց տեարքն չէին անդ, զի էր գիշեր. վասն որոյ բազումք այրեցան. և ոմանք ևս ալք և կանայք արկանէին զինքեանս ի ծովն և անդ խեղդեցան: Ոմն արկեալ զինքն ի ծովն, և գնացեալ նստեալ էր ի վերայ ղարամփովին, որ առ ափամբ ծոցոյն ղումղափուին (որպէս յայտ է գիտողացդ, և անդէն թացեալ զքէպէն, նա դարձեալ ընկղմեալ զքէպէն ի ծովն, պատեալ է զանձամբ, և այնպէս ազատեալ է զինքն. (եթէ ի ցրտոյն ոչ մնասեցաւ):... Արդ բնակիչքն արտաքոյ դրան ղումղափուին էին բազումք՝ օտալարցիք. և գրեթէ ամենեքին աղքատք: իսկ այժմ մերկ և մազապուրծ պրծեալք ի կրակէն, եղեն ամենեքին տասն աղքատ. և անկեալ ի չուկայս, և դրանէ ի դուռն, մուրանան: Պատրիարքն հայոց ժողովեաց բազում դրամս վասն նոցա. դարձեալ հարուստ քարակոփքն աղքատացան, զի այրեցաւ և անչահացաւ մեծագին մարմարոնեայ քարինքն գերեզմանացն տաճկաց: Նոյնպէս մրգավաճառքն և*